

Հրաչյա Սանթրոն

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Լրացավ գիտության մեծ կորիֆեյ Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության հրապարակման երկու տարին:

«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը նոր դարաշրջան բացեց սովետական լեզվաբանության հետագա զարգացման համար: Ի. Վ. Ստալինը այդ աշխատության մեջ փայլուն կերպով բացահայտեց Ն. Յա. Մառի այսպես կոչված լեզվի «նոր ուսմունքի» ոչ մարքսիստական, հակադիտական էությունը և հանճարեղ խորաթափանցությամբ շարադրեց սովետական լեզվաբանության հետագա զարգացման ուղիները, գիտական խորությամբ բացահայտեց լեզվի՝ իբրև հասարակական երևույթի էությունը, լեզվի և արտադրության, բազիսի և վերնաշենքի փոխհարաբերությունը, լեզվի համաժողովրդական բնույթը, նրա սպեցիֆիկայի էությունը, հասարակական ֆունկցիաները, մտածողության հետ ունեցած կապը և ցույց տվեց սովետական լեզվաբանության առողջացման միջոցները:

Ի. Վ. Ստալինը սովետական լեզվաբանության առողջացման կարևոր պայմաններից մեկը համարեց Ն. Յա. Մառի ու նրա հետևորդների սխալներից ազատադրվելը. «Մեր լեզվաբանությունը,—ասում է ընկեր Ստալինը,— որքան ավելի շուտ ազատագրվի Ն. Յա. Մառի սխալներից, այնքան ավելի շուտ կարելի է նրան դուրս բերել այն ճգնաժամից, որն ապրում է նա այժմ»: Ընկեր Ստալինի նշած ցուցումը լրիվ չափով վերաբերում է նաև հայագիտությանը և հատկապես հայոց լեզվի ուսումնասիրությանը:

Ն. Յա. Մառը և նրա հետևորդները հիմք ընդունելով այսպես կոչված լեզվի «նոր ուսմունքի» դոեհիկ մատերիալիստական, հակադիտական դրույթները, լճացման առաջ կանգնեցրին ոչ միայն լեզվաբանությունը, այլև հայագիտությունը: Մեզ մոտ, Հայաստանում, Ն. Յա. Մառի «աշակերտները» և հետևորդները, հայագիտական որևէ հարց ուսումնասիրելիս, ամեն կերպ ձգտում էին ելնել լեզվի «նոր ուսմունքի» դրույթներից:

Անհետաձգելի հարց է Ն. Յա. Մառի ու նրա հետևորդների մեթոդաբանական դրույթների գիտական քննադատությունը՝ հայոց լեզվի պատմության և տեսության հարցերում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Մառի լեզվի «նոր ուսմունքի» հետևորդների աշխատություններում եղած սխալները մինչև այժմ հարկ եղած չափով չեն քննադատված և այդ աշխատությունների հեղինակներն իրենց թույլ տված սխալների մասին շատ քիչ են խոսել, իսկ այդ աշխատությունները շարունակվում են օգտագործվել:

\* \* \*

Եթե մինչև ն. Մառի հանդես գալը գիտության մեջ, բոլոր հայագետները՝ գրաբարը և աշխարհաբարը և անգամ բարբառներն ու ժողովրդական խոսվածքները, հիմք ընդունելով քերականական կառուցվածքը և հիմնական բառաֆոնդը, ըմբռնում էին մի՝ «հայերեն» անվան տակ, ապա Մառը լեզուն վերնաշենքային կատեգորիա համարելու սխալ դրույթից ելնելով, «որոշեց», որ իբր գրաբարը, աշխարհաբարը և բարբառները նույն հայերենը չեն, այլ առանձին «դասակարգային լեզուներ» են։ Այդ պատճառով էլ նա գործածեց «Հայաստանի լեզուներ», «հայոց լեզուներ» տերմինները։ Նա պնդում էր, որ «հայոց լեզուների մեջ խստորեն պետք է տարբերել երկու լեզու՝ «գրաբարը և ժողովրդականը»։ Ըստ նրա՝ հայերեն ժողովրդական խոսակցական կենդանի լեզուն, որն ընկած է նոր հայերեն գրական լեզվի հիմքում, «հատուկ լեզու է» և տարբերվում է հայերեն մյուս լեզվից՝ «հայ ֆեոդալների կենդանի լեզվից»՝ գրաբարից, որն ընկած է եղել հին Հայաստանի գրական լեզվի հիմքում։ Ն. Մառը շփոթություն մտցրեց նաև հայ լեզվաբանական տերմինաբանության մեջ, «հայերեն լեզուներից» մեկը կոչելով «տեղական», «ազգային» կամ «հայական» (на́йский), որը ժառանգվել է իբր թե Հայաստանի ազգաբնակչության իշխանական շերտից, իսկ մյուսը՝ հանրածանոթ՝ «հայերեն» (армянский)։

Մառը սրան հետագայում ավելացրեց մի այլ տեսակետ ևս և նոր շփոթություն մտցրեց «հայոց լեզուներում», նրանք կոչելով «քեական» և «րեական»։

1. «Քեականը, — գրում է Մառը, — դա այն լեզուն է, որին մենք մինչև այժմ կոչել ենք հայական։ Այդ լեզուն ընկած է հայերենի հին գրական լեզվի հիմքում»։ 2. «Րեական լեզուն, այն լեզուն է, որը մինչև այժմ մեր կողմից կոչվել է հայերեն, որն իր բնույթի տեսակետից համեմատաբար մաքուր տեսքով հասել է մինչև մեր օրերը, և որն ընկած է հայերենի նոր գրական լեզվի հիմքում»<sup>1</sup>։

Այս բոլորը Մառին հանգեցրին բացարձակ սխալ եզրակացության՝ հայերեն երկու ինֆնուույն լեզվի գոյության տեսակետին։ Մառը հայտարարեց, որ «Հայաստանում կան երկու ազգային լեզուներ, ավելի ճիշտ, տարբեր էպոխաների երկու «դասակարգային լեզուներ»՝ ֆեոդալական (հին դրական) և ժողովրդական» (նոր գրական)։

Այդ տեսակետը հիմնովին հակառակ է հայերենի միասնական, համա-ժողովրդական հաղորդակցության միջոց լինելու գաղափարին։ Երկու լեզվի գոյության հարցի հետ, հայերենագիտության մեջ Մառից ժառանգություն մնաց նրանց անվանումը՝ «ֆեոդալական» (գրաբարը) և «ժողովրդական» (աշխարհաբարը), որն անվերապահորեն ընդունեցին և շարունակեցին զարգացնել Մառի հայ «աշակերտները»։ Այսպես, օրինակ՝ պրոֆ. Սեակր հետևելով Ն. Յա. Մառի՝ լեզուն վերնաշենքային կատեգորիա լինելու սկզբունքին, գտնում էր, որ «լեզուն հասարակական գիտակցության ձևերից մեկն է՝ վերնաշենքային արտահայտություն...»<sup>2</sup>, որից եզրակացնում էր՝ «Հասարակական յուրաքանչյուր

<sup>1</sup> Г. Я. Марр, Астрономические и этнические значения двух племенных названий армян, 1921, ЗВО, т. XXV, стр. 233.

<sup>2</sup> Պրոֆ. Դ. Սեակր, Ժառանգակից հայերենի համառոտ պատմություն, Իրևան, 1948, էջ 10։

Ֆորմացիայի օրինաչափորեն ուղեկցում է լեզվական համապատասխան «ֆորմացիա»<sup>1</sup>։ Լեզուն վերնաշենքային կատանգորիա համարելու սխալ դրույթից բխում էր պրոֆ. Սևակի մյուս սխալ գրույթը, երբ համաժողովրդական, համազգային լեզուն ժխտվում էր և դիտվում իբրև դասակարգային։ «Դասակարգային հասարակության ներսում,— գրում է ընկ. Սևակը,— ընդհանուր գրական լեզուն տրոհված է ըստ բովանդակության տարբեր դասակարգային լեզուների»<sup>2</sup>։

Լեզվի «դասակարգայնության» գոհճիկ սոցիոլոգիական թեզը պրոֆ. Սևակը փորձել է կիրառել հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ գրաբարը և արդի հայերենը ներկայացնելով իբրև տարբեր ֆորմացիաներ. «որ գրաբարը հայոց լեզվի տարբեր «ֆորմացիա է», իհարկե ընդունում են բոլորը։ Սակայն առայժմ շատերը չեն հաշտվում այն մտքի հետ, որ մեր արևելյան գրական հայերենը լեզվական նոր «ֆորմացիա» է նախասովետականի համեմատությամբ»<sup>3</sup>։

Սակայն հարկե է գիտենալ, թե «լեզվական ֆորմացիա» ասելով ի՞նչ է հասկանում ընկ. Սևակը։ Այդ հարցին ինքը, հեղինակը տալիս է հետևյալ պատասխանը. «Լեզվական «ֆորմացիա» ասելով մենք չենք պատկերացնում լեզվական-քերականական սխտեմ... այլ հասարակական հաղորդակցման, մտածողության և գիտակցության սխտեմ»<sup>4</sup> (ընդգծումը հեղինակինն է)։

Լեզուների զարգացումը պրոֆ. Սևակը համարում է «հասարակության ներսում գոյություն ունեցող ներհակ դասակարգերի ու դասերի խոսվածքների, բարբառների ու լեզուների հակամարտության, նրանց պայքարի»<sup>5</sup>։ արդյունք, և այս հակագիտական դրույթից ելնելով հանգում է այն սխալ եզրակացության, թե «աշխարհաբարը ևս լինելով դասակարգային հասարակության լեզու՝ ենթակա էր զարգացման նոր օրենքների»<sup>6</sup>։

Այդ նույն սխալ գրույթը ավելի հետևողականորեն պաշտպանել և զարգացրել է պրոֆ. Ա. Ղարիբյանը։

Պրոֆ. Ա. Ղարիբյանը իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ, հայոց լեզվի պատմությունը շարադրել է, այն պատկերացնելով ոչ թե որպես միասնական, համաժողովրդական, հետագայում համազգային լեզու, որը սերտորեն կապված է եղել այդ լեզուն կրող հասարակության՝ հայ ժողովրդի պատմության հետ և փոփոխվել է դարերի ընթացքում, աստիճանական կուտակման ճանապարհով, այլ ներկայացրել է իբրև դասակարգային երևույթ, որի փոփոխությունը կատարվել է հասարակական ֆորմացիաների անմիջական փոփոխությամբ։ Այսպես, օրինակ՝ պրոֆ. Ա. Ղարիբյանը գրաբարը համարել է «միջին շրջանի հայ ֆեոդալ դասակարգի գրական լեզու», միջին հայերենը՝ «ֆեոդալական հասարակության լեզու», հայերենի բարբառները՝ «հայ գյուղացիության դասակարգային լեզուներ», աշխարհաբարը՝ «հայ բուրժուական գրական լեզու» և, վերջապես, հայ գրական

<sup>1</sup> Պրոֆ. Գ. Սևակ. Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 10։

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Նույն տեղում։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 11։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 12։

<sup>6</sup> Նույն տեղում։

լեզվի զարգացման արգի էտապը՝ «պրոլետարական հայերեն»<sup>1</sup> պրոֆ. Ա. Ղարիբյանը չի խորշում գործածելու «բուրժուական լեզու», «սոցիալիզմի լեզու»<sup>2</sup> և այլ տերմինները, օրինակ, մի տեղ գրում է՝ «Բուրժուական լեզվի (ընդգծումն իմն է— Հ. Ս.) ճապաղ ու վարժապետական ոճերի փոխարեն մենք ունենք շիկացած երկաթի պես խարող լողուններ, ձևակերպումներ և ոճեր»<sup>3</sup>։

Զարմանալին այն է, որ պրոֆ. Ա. Ղարիբյանը դասակարգայնություն է որոնել նույնիսկ ուղղագրության մեջ, ասելով, որ «բուրժուազիայի շահերին ձեռնադրելով ուղղագրության ղեկավարը, քանի որ գրական լեզվի ուղղագրությունը նրա դասակարգային լեզվի հատկանիշներից մեկն էր»<sup>4</sup> (ընդգծումն իմն է— Հ. Ս.)։

«Հարեթական տեսությունը,— հայտարարում էր Ն. Մառը,— լեզուն դիտում է իբրև երկրորդային, վերնաշենքային կարգի երևույթ, որ կախում ունի շրջակա նյութական միջավայրից»<sup>5</sup>։

Ի. Վ. Ստալինը պատմական և լեզվական փաստերի հիման վրա, փիլիսոփայական խորը վերլուծության ենթարկելով լեզվի վերնաշենք լինելու սխալ թեզը, ուսուցանում է.

«ա) Մարքսիստը չի կարող լեզուն համարել վերնաշենք բազիսի վրա.

բ) լեզուն շփոթել վերնաշենքի հետ, նշանակում է թույլ տալ լուրջ սխալ»<sup>6</sup>։

Ն. Մառը գտնում էր, որ «...Չկա լեզու, որը դասակարգային եղած չլինի»<sup>7</sup>։ Իսկ «ինչու և այդքան դժվար է լինել տեսաբան-լեզվաբան» իր հոդվածում նա ուղղակի հայտարարում էր, որ «գոյություն չունի ազգային, համազգային լեզու, այլ կա միայն դասակարգային լեզու»<sup>8</sup>։ Նա ճգնում էր «ապացուցել», որ ընդհանուր, ժողովրդական լեզու «իբրև ամբողջ քնակչության զանգվածային մայրենի լեզու չի եղել և չէր էլ կարող լինել, այլ լեզուն միշտ եղել է սոցիալական, դասակարգային»<sup>9</sup>։ Մառի կարծիքով համազգային լեզվի գաղափարը գիտական և ռեալ չէ, այլ ֆիկցիա է, այսպես, օրինակ, նա առանց որևէ փաստի և դիտական հիմնավորման բացահայտ հայտարարում էր. «Ոչ Հայաստանում, ոչ Ապենինյան թերակղզում, ոչ էլ առհասարակ որևէ տեղ նվրոպայում չի եղել և չէր կարող լինել ուրիշ ազգային լեզու հին ժամանակներում, քան սոցիալական, դասակարգային լեզու։ Մի խոսքով,— եզրակացնում է Մառը,— մոտեցումը այսպես կոչված ազգային կուլտուրայի այս կամ այն լեզվին, իբրև ամբողջ բնակչության զանգվածային մայրենի լեզվի, գիտական չէ և ռեալ չէ, արտադասային, արտադասակարգային ազգային լեզուն ֆիկցիա է»<sup>10</sup>։

Այստեղ Ն. Մառը երկու ուտով կանգնում է գոհիկ սոցիոլոգիզմի դիրքերի վրա և լեզվի ապադասակարգայնությունը ֆիկցիա համարելով, զարգացնում է հակագիտական այն տեսակետը, ըստ որի լեզուն դասակարգային կատեգորիա է։

<sup>1</sup> Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 264։

<sup>2</sup> Նույնը, էջ 254։

<sup>3</sup> Ն. Մառ, Ընտիր երկեր (հայերեն), էջ 181։

<sup>4</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 24։

<sup>5</sup> Ն. Մառ, Ընտիր երկերի ժողովածու (ռուս.), 1, հ. 3, էջ 90—91։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 183—184 (հրատ. հայ.)։

<sup>7</sup> Նույն տեղում։

<sup>8</sup> Նույն տեղում։

Ի. Վ. Ստալինը բացահայտելով լեզվի «դասակարգայնության» տեսության կոթիվները, հանձարեղ կերպով ապացուցեց, որ Ն. Մառը և նրա հետևորդները, լեզուն «դասակարգային» համարելով, թույլ են տվել հիմնականում երկու կոպիտ սխալ: Նախ՝ նրանք լեզուն շփոթել են վերնաշենքի հետ և կարծել են, որ եթե վերնաշենքը դասակարգային բնույթ ունի, ապա լեզուն ևս լինելով վերնաշենքային կատեգորիա, ոչ թե համաժողովրդական է, այլ դասակարգային: Երկրորդ՝ լեզվի «նոր ուսմունքի» հետևորդները երկու հակադիր դասակարգերի պայքարը ըմբռնել են իբրև հասարակության տրոհում: Նրանք կարծել են, որ եթե հասարակությունը քաժանվում է թշնամական դասակարգերի, այլևս ընդհանուր բան չի կարող լինել նրանց մեջ, հետևապես չկա նաև միասնական լեզու, համաժողովրդական և կամ համազգային լեզու: «Հասկանալի է, — ուսուցանում է ընկեր Ստալինը, — որ հասարակության, դասակարգերի, լեզվի նրկատմամբ այդպիսի պրիմիտիվ-անարխիստական հայացքը ընդհանուր ոչինչ չունի մարքսիզմի հետ»<sup>1</sup>:

Ն. Մառի գոհհիկ սոցիոլոգիզմը լեզվաբանության մեջ այնտեղ հասավ, որ հնչյունափոխությունների և հնչյունների փոխհարաբերությունների մեջ անզամորոնում էր «դասակարգայնություն». օրինակ՝ ձայնեղացման երեք աստիճանները՝ դ, տ, թ, ըստ Մառի, զարգացման երեք աստիճաններն են ժամանակի մեջ միևնույն տնտեսական կոլեկտիվում, հետագայում միևնույն դասակարգի մեջ: Սուլականների և շշականների փոխհաջորդումը (ս/շ և այլն) միմյանց մոտիկ երկու լեզվական խմբի, Մառի կարծիքով տնտեսական կոլեկտիվի, դասակարգի համաձայնեցվածությունն է. իսկ առաջնալեզվային բաղաձայնների՝ դ, տ, թ, ջ, ճ, չ-ի և այլն փոխարինումը հետնալեզվայիններով՝ գ, կ, ք, ղ, խ և այլն, ինչպես նաև ս/շ, և այլ հնչյունների փոխարկումը երկու միմյանցից ավելի հեռու կանգնած լեզուների հնչյունների իբր թե երկու ճյուղերի նվաճած համաձայնեցվածությունն է, անցյալում երկու տնտեսական կոլեկտիվների համակեցության արտահայտությունը, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է ցեղային միավորների ավելի սերտ միություն և այլն<sup>2</sup>:

Ընկեր Ստալինը փայլուն կերպով մերկացնելով Ն. Մառի ու նրա հետևորդների սխալ, ոչ մարքսիստական դրույթը՝ լեզվի «դասակարգայնության» վերաբերյալ, հանձարեղ կերպով ապացուցեց, որ

«ա) լեզուն որպես հաղորդակցման միջոց միշտ եղել և մնում է հասարակության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու:

բ) Բարբառների և ժարգոնների առկայությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի առկայությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում դրանք և որին ենթակա են դրանք:

գ) լեզվի «դասակարգայնության» ֆորմուլան սխալ, ոչ մարքսիստական ֆորմուլա է»<sup>3</sup>:

Պարզ է, որ Ն. Մառը և նրա հետևորդները հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում ևս մտցնելով լեզվի «դասակարգայնության» թեորիան, շփոթեցրել են նաև հայագիտությունը:

Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ լեզուն, ի տարբերություն վերնաշենքի, կարող է գոյություն ունենալ և իր դերը հաջողությամբ կատարել մի շարք բա-

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 41:

<sup>2</sup> Տե՛ս Ն. Մառ, Ընտիր երկեր, Երևան, 1949, էջ 99:

<sup>3</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 48:

զիսների և վերնաշենքերի ժամանակ: Լեզուն հասարակական երևույթ լինելով և ամբողջ հասարակությանը սպասարկելով հանդերձ, ունի իր առանձնահատկությունները, որոնք նրան տարբերում են հասարակական այլ երևույթներից, նա հասարակությանը սպասարկում է «որպես մարդկանց հաղորդակցման միջոց, որպես հասարակության մեջ մտքեր փոխանակելու միջոց, որպես մի միջոց, որը մարդկանց հնարավորություն է տալիս հասկանալու միմյանց և կարգավորելու համատեղ աշխատանքը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում՝ ինչպես արտադրության բնագավառում, այնպես էլ տնտեսական հարաբերությունների բնագավառում, ինչպես քաղաքականության բնագավառում, այնպես էլ կուլտուրայի բնագավառում, ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ կենցաղում»<sup>1</sup>: Լեզվի առանձնահատկությունները նկատի ունենալով, ընկեր Ստալինը գտնում է, որ «...լեզուն չի կարելի դասել ո՛չ բազիսների կարգը, ո՛չ էլ վերնաշենքերի կարգը»<sup>2</sup>:

Գիտական այս խորը սահմանումից բխում է այն, որ լեզուն հասարակական այնպիսի երևույթ է, որ երկար դարերի ընթացքում պահպանում է իր գոյությունը, հանդիսանում է մի շարք դարաշրջանների արդյունք և ապրում է ավելի երկար, քան որևէ բազիս կամ վերնաշենք: Ոչ մի ժողովուրդ չի փոխել կամ ոչնչացրել իր լեզվի հիմնական բառային ֆոնդն ու քերականական կառուցվածքը, իր տնտեսական և քաղաքական կյանքում կատարված ամեն մի փոփոխության հետ:

Մառը և նրա հետևորդները չկարողանալով ըմբռնել լեզվի էությունը և նրա զարգացման ներքին օրինաչափությունները, լեզուն դիտելով վերնաշենքային, դասակարգային երևույթ, նույնացնում էին նրա և հասարակական մյուս երևույթների զարգացումն ու փոփոխման օրինաչափությունները:

\* \* \*

Ն. Մառը, ելնելով լեզուների խաչավորման իր սխալ գրույթից, գտնում էր, որ հայոց լեզուն իբր ծագմամբ միատարր չէ, որ նա իր մեջ ունի հաբեթական ու հնդեվրոպական լեզուների խաչավորման բազմաթիվ տարրեր, որոնք միմյանց համազոր են «...Հայոց լեզուն,— նշում է նա,— զիտնականների համար այժմ տեղ չուծված հանելուկ է: Մի բան շատ պարզ է, որ նա խառն լեզվի ամենացայտուն նմուշ է»<sup>3</sup>:

Ն. Յա. Մառը երբ հայոց լեզուն համարում էր խառն տիպի լեզու, նկատի ուներ ոչ թե հայերենի մեջ եղած փոխառությունները, այլ հայերենի իսկական կորիզը, որը, նրա կարծիքով, ունի երկտարր, համազոր բնույթ, նա առաջ էր քաշում հայերենի հնդեվրոպական ու հաբեթական տարրերի հավասարաշափ լինելը, հայտարարելով, որ հայերենը «խառնածին լեզու է», այսինքն «արիո-հաբեթական»:

Ն. Մառը իր գործունեության վերջին տարիներում, երբ մշակում էր լեզվի «նոր ուսմունքը», ավելի առաջ տարավ «հայոց լեզուների»՝ զրաբարի և աշխարհաբարի խաչավորված լինելու փաստը, շեշտելով, որ խաչավորումը տարրեր ձևով է կատարվել, այսինքն «Մեկն առաջացել է մինչև երկու տիպերից յուրաքանչյուրի ավարտումը, մյուսը ավարտելուց հետո»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 83:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 84:

<sup>3</sup> Н. Я. Марр. Грамматика древнеармянского языка, СПб., 1903, стр. XXXI.

<sup>4</sup> Ն. Մառ, Ընտիր երկեր, 1949, էջ 147:

Մառը գտնում էր, որ հայոց լեզուների խաչավորված, հիբրիդ լինելը հետևանք է ամենից առաջ տարբեր ցեղերի խաչավորման և ներթափանցման: Հայերենը հիբրիդ է, որովհետև ինքը հայ ժողովուրդը ըստ Ն. Մառի հիբրիդ է, այսինքն տարբեր ցեղերից առաջացած համազոր գոյակցություն:

Հաբեթական և հնդեվրոպական լեզուների իբրև խաչավորման նմուշ Մառը նշում էր նաև լատիներենը, որը նրա կարծիքով նույնպես հանդիսանում է մի բարդ խաչավորում՝ հնդեվրոպական լեզվի և սկզբնական, ոչ մաքուր եվրոպական լեզվի: Ըստ Ն. Մառի, խաչավորումը կարող է տեղի ունենալ ոչ միայն երկու, այլ երեք և ավելի ընտանիքների պատկանող լեզուների միջև:

«Հայոց լեզուների» ուսումնասիրությունը Ն. Մառը «պարզում էր», որ ընդհանրապես մաքուր լեզուներ գոյություն չունեն, աշխարհի բոլոր լեզուները հանդիսանում են խաչավորման արդյունք:

Հետագայում լեզվի «նոր ուսմունքի» մշակմամբ, Ն. Մառը կարծում էր, որ լեզուները իբր թե չեն ծագում երբեք մի աղբյուրից, այլ բազմաթիվ աղբյուրներից, նրանց խաչավորումից, զանազան ցեղային լեզուների միացումից և ձուլումից և հայտարարում էր, թե «Որքան խաչաձևում, այնքան մեծ կատարելագործություն»<sup>1</sup>:

Ն. Մառի և նրա հետևորդների կողմից սահմանված ժողովուրդների ու լեզուների «խաչավորման տեսությունը» միանգամայն պարզ է. ըստ այդ տեսության, երկու տարբեր լեզուներ պատմության ընթացքում կարող են խաչավորվել միմյանց հետ: Այդ խաչավորման հետևանքով կարող է առաջանալ մի բոլորովին նոր որակի լեզու, որը նման չլինի նախորդ լեզուներից և ոչ մեկին, կամ էլ խաչավորման ժամանակ խաչավորվող լեզուները միմյանց չեն զիջում, այլ մնում են հավասարազոր, համազոր վիճակում:

Այսպիսով, լեզուների խաչավորման մառյան տեսությունը բոլորովին անտեսում է հաղթող լեզվի դերը, խաչավորման պրոցեսը ներկայացնում է պատմությունից կտրված, ոչ թե տեղական գործողության, այլ ինչ-որ հանկարծակի թռիչք, մեխանիկական երևույթ, վճռական հարվածի եզակի ակտ:

Ընկեր Ստալինը ցույց տվեց այս դրույթի անհեթեթությունը ևս, ապացուցելով, որ խաչավորումը տեղական պրոցես է և խաչավորման ժամանակ լեզուներից մեկը սովորաբար լինում է հաղթող, իշխող (պրիմատ), իսկ մյուսը՝ սլարտվող, որը իր սեփական լեզվից պահելով որոշ լեզվական տարրեր, հարստացնում է հաղթողի լեզուն, սակայն ինքը կորցնում է իր լեզվի սեփական քերականական կառուցվածքը և հիմնական բառային ֆոնդը:

«Խաչավորման թեորիան,— ուսուցանում է ընկեր Ստալինը,— որևէ լուրջ բան չի կարող տալ սովետական լեզվաբանությանը»<sup>2</sup>:

Ն. Մառը գտնում էր, որ նույնիսկ այսպես կոչված մաքուր հաբեթական լեզուներում չկա որևէ այնպիսի լեզու, որը խաչավորված չլինի: Անգամ վրացերեն լեզուն, որը Մառը հաբեթական լեզուներից ամենամաքուրն էր համարում, նրա կարծիքով, իրենից ներկայացնում է խառնածին տիպ:

Ն. Մառի ուսումնասիրությունները հանգում էին այն գաղափարին, որ հաբեթական լեզուները խաչավորվել են ոչ միայն միմյանց, այլ նաև հնդեվրոպական (արիական) լեզուների հետ:

<sup>1</sup> Ն. Մառ, Հայկական մշակույթը, նրա արձատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության, «Սովետական գրականություն և արվեստ», 1949, № 8, էջ 92:

<sup>2</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 68:

Այսպիսով, հնդեվրոպական լեզուների ընտանիքը Ն. Մառը ընդունում է իբրև ավելի քարդ աստիճանի խաչավորման արդյունք, որը նրա կարծիքով կախված է «արտադրության նոր ձևերից»։ Իսկ այդ «արտադրության նոր ձևերը» Մառը կապում է մետաղների հայտնադործման և տնտեսության մեջ նրանց լայն օգտագործման հետ։ Ըստ Մառի՝ լեզուների այդ ընտանիքը հանդիսանում է տնտեսական, հասարակական նոր պայմանների ծնունդ, իբրև «Միջերկրածովյան հաբեթական լեզուների զարգացման նոր ստադիա, նոր ֆորմացիա»։

Եթե հնդեվրոպական հայագետները հայ ժողովրդին ու նրա լեզուն ծագմամբ համարում էին միածին, միաձույլ, միատարր, Ն. Մառը՝ խառնածին, հիբրիդ, ապա պրոֆ. Ա. Ղարիբջանը համարեց քաղմածին։

Ժիշտ է, պրոֆ. Ա. Ղարիբջանը առաջին անգամ (դեռևս 1932 թվականին) փորձեց ապացուցել, որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ կազմակերպվել է տեղական ցեղերի գոյացումից՝ բնիկ երկրում, սակայն նա կարծում էր, որ «շատ և շատ տոհմեր, առնվազն երկու հարյուրի սահմաններում, միանալով՝ ֆեոդալական հասարակության կազմության և այդ պրոցեսի ավարտման հիման վրա՝ գոյացրել են հայկական էթնոսը»<sup>1</sup>։ Հայ ժողովրդի գոյացումը պատկերացնելով ինչ-որ 200 տոհմերի մեխանիկական մի խառնուրդ՝ մոզայիկ վիճակում, նշանակում է միանգամայն ժխտել պրիմատ կազմող, հաղթող ցեղի գոյությունը, նշանակում է ոչ մի հայկական բան չտեսնել նրա մեջ։

Պրոֆ. Ա. Ղարիբջանը նույնը ասել է նաև հայոց լեզվի մասին, այն պատկերացնելով իբրև մի կոնգլոմերատ, իսկ նրա կազմավորման պրոցեսը դիտելով իբրև զանազան լեզուներից վերցված տարրերի մեխանիկական մի խառնուրդ՝ մոզայիկ ձևով։

«...Այնպես ինչպես ինժեները, — գրում է պրոֆ. Ա. Ղարիբջանը, — կառուցում է իր ճարտարապետական հղացումը այլևայլ նյութերից, այդպես էլ մեր ժողովուրդը իր լեզվի կառուցումը կատարել է այլևայլ նյութերից»<sup>2</sup>։ «Հայերեն լեզուն, — մի այլ տեղ ասում է պրոֆ. Ա. Ղարիբջանը, — իսկական մոզայիկ է»<sup>3</sup>։

Պրոֆ. Ա. Ղարիբջանը կարծում էր, որ հայոց լեզուն «գոյացել» է որպես արդյունք ցեղերի և տոհմերի լեզուների խաչավորման<sup>4</sup>, և դրանից ելնելով եզրակացնում էր, թե «և՛ աղգային լեզուները, և՛ ժողովրդական լեզուները, և՛ թե էթնիկական լեզուները առաջանում են»<sup>5</sup> միայն միավորման ճանապարհով, և իբր թե քանի որ «ժողովուրդը առաջացել է բազմաթիվ ցեղերի միացումից, ապա ուրեմն նրա լեզուն ևս առաջացել է բազմաթիվ ցեղական լեզուների միացումից»<sup>6</sup> (ընդգծումն իմն է — Հ. Ս.)։

Ն. Յա. Մառի՝ լեզուների խաչավորման տեսությամբ է բացատրել տարբեր ընտանիքի պատկանող լեզուների նմանությունները ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ա. Մուրվալյանը. այսպես, օրինակ՝ հայոց և վրաց լե-

<sup>1</sup> Ա. Ղարիբջան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, էջ 68—69։

<sup>2</sup> Տես ՀՍՍՌ-ի Ա հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1946, №1, էջ 34։

<sup>3</sup> «Տեղեկագիր», 1945, № 9, էջ 13։

<sup>4</sup> Ա. Ղարիբջան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, 1937, էջ 78։

<sup>5</sup> Ա. Ղարիբջան, Համահոտագրություն հայ բարբառագիտության։

<sup>6</sup> Նույնը, էջ 19։

զուգուների լեզվական կապերը, ընդհանրությունները, զուգադիպությունները լուսաբանելու համար նա դոգմա է ընդունել Ն. Մառի լեզվի «նոր ուսմունքը», հայտարարելով, որ «մենք ամուր կանգնած ենք Մառի լեզվի նոր ուսմունքի դիրքերի վրա և այսօր... շողշողում է հաբեթական լեզվաբանության արևը՝ արդարությունը»<sup>1</sup>:

Հենկ. Մուրվալյանը հայոց լեզուն «բնորոշել» է այսպես՝ «...հայոց լեզուն ոչ թե միաձուլյալ ամբողջություն է, ինչպես ընդունում էին հնդեվրոպաբանները, այլ տարբեր ցեղային լեզուների խաչավորման արդյունք է, ստացված հնդեվրոպական և մի շարք հաբեթական լեզուների խաչավորումից»<sup>2</sup>:

Լեզուների պատմությունը ցույց է տվել, որ դասակարգային հասարակության մեջ լեզուների խաչավորման պրոցեսը որևէ վճռական նշանակություն չի ունեցել և լեզուների խաչավորումը չի տվել ինչ որ որակով նոր լեզու, որը նման շիներ խաչավորված լեզուներից և ոչ մեկին և կամ էլ լեզուն առաջանար մի քանի լեզուների մեխանիկական խառնուրդից:

\* \* \*

Ն. Յա. Մալը և նրա հետևորդները գտնում էին, որ լեզուների զարգացումը, լեզվի մի որակից մի այլ որակի անցումը կատարվում է պայթյունի միջոցով, լեզվական հին որակը ամբողջապես լիկվիդացնելու ճանապարհով, այսինքն ստադիալ անցումներով. նրանցից յուրաքանչյուրը իբրև թե պայմանավորված է հասարակական նոր կարգերով: Նրանք կարծում էին, որ լեզուն ամեն մի բազիսի փոփոխման հետ հիմնովին փոխվում է հասարակական նոր հարաբերությունների համապատասխան: Մատականները գտնում էին, որ լեզուն զարգանում է ոչ թե էվոլուցիոն ճանապարհով, աստիճանական կուտակմամբ, այլ մուտացիաներով, պայթյունների միջոցով: Ն. Մալը ընդունում էր, որ լեզուներն անշեղորեն շարժվում են մուտացիոն կարգի ուղիներով, պայթյուններով զարգանալու ուղիներով (ընդգծումն իմն է— Ն. Ս.), նայած նյութական կուլտուրայի, նրա տեխնիկայի և հասարակական կարգի, ստեղծվող սխեմաների հերթափոխությանը...»<sup>3</sup>:

Ի. Վ. Ստալինը փայլուն կերպով ապացուցեց այս դրույթի անհեթեթությունը ևս և ցույց տվեց, որ լեզվի մեջ փոփոխությունները տեղի են ունենում դանդաղ, որ լեզվի սպեցիֆիկայի էությունը կազմող քերականական կառուցվածքը և հիմնական բառաֆոնդը փոփոխության են ենթարկվում դարերի ընթացքում, որ նրանց հիմքերը պահպանվում են շատ երկար ժամանակի ընթացքում և կապ չունեն որևէ հասարակական ֆորմացիայի փոփոխման հետ, որովհետև լեզուն հասարակությանը սպասարկում է մի շարք դարաշրջանների ընթացքում:

Լեզվի «նոր ուսմունքը» պարզում է, որ իբրև նոր լեզուները պայթյունների միջոցով անցնում են լեզվի զարգացման մի ստադիայից դեպի մյուսը: Այս տեսակետից էլ այն երևույթները, որոնք առաջ լուծվում էին իբրև հաբեթական և հնդեվրոպական լեզուների խաչավորման հետևանք, այժմ բացատրվում են

<sup>1</sup> Ա. Մուրվալյան, Հայերենի մասնիկները և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ, Լեզվի ինստիտուտի աշխատ., 1949, № 4, էջ 80:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 80—81:

<sup>3</sup> Ն. Մալ, Ընտիր երկեր, 1949, էջ 87:

նրանով, որ տվյալ լեզուն գտնվում է անցման ստադիայի մեջ, հաբեթական սիստեմից դեպի հնդեվրոպական-պրոմեթիդականը:

Հայերենը ևս նոր մեկնաբանում ստացավ: «Հայոց լեզուները» Մառի կողմից դիտվեցին իբրև «երկու տարբեր լեզվական տիպեր», որոնցից մեկը՝ հին գրականը կամ «ֆեոդալականը» (գրաբարը) իբրև անցման աստիճան՝ լեզվի հաբեթական ստադիայից դեպի պրոմեթիդականը» (հնդեվրոպական), իսկ մյուսը՝ «ժողովրդականը», կամ ժամանակակից գրական հայերենը. — «հաբեթական ստադիայից» դեպի ուրալա-ալթայան լեզվական տիպը:

1928 թվականին, Ադրբեջանի համալսարանում կարդացած լեզվի ընդհանուր ուսմունքի վերաբերյալ դասախոսությունների մեջ Ն. Մառը տվեց հայերենի նոր «բնորոշում»:

Հայաստանի այդ երկու լեզուները Մառի կողմից սահմանվեցին իրենց ձևաբանական հատկանիշներով իբրև երկու առանձին սիստեմների պատկանող լեզուներ, մեկը՝ քեականը — թեքական, մյուսը՝ րեականը — կցական. միևնույն ժամանակ «պարզվեց», որ իբր նրանք հաբեթական սիստեմից պրոմեթիդականին անցնող լեզուներ են, թեև չէր բացառվում յուրաքանչյուրի խաչավորված լինելու փաստը:

Ն. Մառը հայոց լեզվի ուսումնասիրության հարցերի լուծման համար առաջադրում էր այն հակագիտական պահանջը, ըստ որի հետազոտությունները կատարվեն ելնելով լեզվի «ստադիալ զարգացումից», հիմք ընդունվեն «լեզվի սոցիալ-արտադրական ֆունկցիաները»:

Միանգամայն պարզ է, որ Ն. Մառը լեզվի փոփոխությունը կապում էր ֆորմացիաների փոփոխման և իր հորինած «ստադիաների» հետ, մինչդեռ մարքսիզմը գտնում է, որ «լեզվի մի որակից մի այլ որակի անցնելը տեղի է ունեցել ոչ թե պայթյունի միջոցով, ո՛չ թե հնի միանգամյա ոչնչացման և նորի կառուցման միջոցով, այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական և տեական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»<sup>1</sup>:

Պրոֆ. Է. Աղայանը իր «Լեզվաբանության ներածությունը ըստ լեզվի նոր ուսմունքի» աշխատության մեջ փորձում էր ավելի «հիմնավոր» կերպով «ուսարանել» լեզուների ստադիալ զարգացման տեսությունը. նա գտնում էր, որ «լեզվի զարգացումը պայմանավորված է հասարակության նյութական կյանքի զարգացմամբ: Բայց հասարակական կյանքը, ինչպես գիտենք, սոսկ էվոլուցիոն փոփոխություններով չի զարգանում, այլև՝ ուղղուցիաներով, հասարակության արտադրական հարաբերությունների ուղղուցիոն անցումներով: Այդ նույնը վերաբերում է նաև լեզվին ու մտածողությանը, լեզվի զարգացման ստադիաները... հենց այդ ուղղուցիոն անցումների, թռիչքների արդյունք են: Բոկ եթե այդպես է, ապա՝ լեզվի զարգացման հիմնական օրինաչափությունը նրա ստադիականությունն է: Առանց դրա լիակատար գիտակցման անկարելի է խոսել մարդկային լեզվի, կամ առանձին լեզուների զարգացման մասին»<sup>2</sup>:

Այս սխալ սկզբունքից ելնելով, մի այլ տեղ պրոֆ. Է. Աղայանը ասում է. «Լեզուների պատմության ուսումնասիրության մեջ՝ դասակարգման առաջնա-

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 60—61:

<sup>2</sup> Է. Աղայան, Լեզվաբանության ներածությունը ըստ լեզվի նոր ուսմունքի, էջ 210:

կարգ ու հիմնական պայմանն է ստադիալականությունը, նա է լեզուների գիտական ուսումնասիրության անկյունաքարը»<sup>1</sup>։

Իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ ընկեր Ստալինը բացատրելով լեզուների զարգացման օրինաչափությունները՝ նշեց, որ «...խորապես սխալ կլիներ կարծել, թե լեզվի զարգացումը տեղի է ունեցել նույնպես, ինչպես վերնաշենքի զարգացումը՝ գոյություն ունեցողի ոչնչացման և նորի կառուցման միջոցով։ Իրականում լեզվի զարգացումը տեղի է ունեցել ո՛չ թե գոյություն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջոցով։ Ըստ որում, լեզվի մի որակից մի այլ որակի անցնելը տեղի է ունեցել ո՛չ թե պայթյունի միջոցով, ո՛չ թե հնի միանգամյա ոչնչացման և նորի կառուցման միջոցով, այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով։

Ասում են, որ լեզվի ստադիալ զարգացման թեորիան մարքսիստական թեորիա է, որովհետև նա ընդունում է հանկարծակի պայթյունների անհրաժեշտությունը, որպես լեզվի հին որակից նոր որակի անցնելու պայման։ Դա, իհարկե, ճիշտ չէ, որովհետև դժվար է որևէ մարքսիստական բան գտնել այդ թեորիայի մեջ։ Եվ եթե ստադիալականության թեորիան իրոք հանկարծակի պայթյուններ է ընդունում լեզվի զարգացման պատմության մեջ, ապա, ավելի վատ նրա համար։ Մարքսիզմը չի ընդունում հանկարծակի պայթյուններ լեզվի զարգացման մեջ, գոյություն ունեցող լեզվի հանկարծակի մահացում և նոր լեզվի հանկարծակի կառուցում»<sup>2</sup>։

\* \* \*

Ն. Յա. Մառը կարծում էր, որ սկզբնապես, իբրև մարդկային հաղորդակցման միջոց ծառայել է շարժումների կամ «գծային լեզուն»։ Ըստ Մառի, «ձեռք լեզուն» կամ շարժումների «լեզուն» նախորդել է հնչյունական լեզվին։ Լեզվի գոյացման վերաբերյալ մառյան այս թեզը պրոֆ. Ա. Ղարիբյանը փորձել է հիմնավորել հայոց լեզվի փաստական նյութի վրա, գտնելով, որ «Եթե ի նկատի առնենք, որ նորագույն ուսումնասիրությունները (ո՛րտեղ. այդ մասին հեղինակը չի նշում) երևան են բերում ժեստերի լեզվի կամ գծային լեզվի բազմաթիվ մնացուկներ հայերեն լեզվի մեջ, նշանակում է՝ հնչյունական լեզուն Հայաստանում տեղական ծագում ունի, այսինքն քարե դարի մարդկային հասարակությունը Հայաստանում գծային լեզվից Կենցել է հնչյունական լեզվին» (ընդգծումն իմն է— Ն. Ս.)<sup>3</sup>։

Այս տեսակետը հիմնովին սխալ է, չի դիմանում մարքսիստական քննադատության և հակասում է ստալինյան լեզվաբանական ուսմունքի այն դրույթին, որն ասում է, թե «հնչյունային լեզուն կամ բառերի լեզուն միշտ էլ եղել է մարդկային հասարակության միակ լեզուն, որն ընդունակ է ծառայելու որպես մարդկանց հաղորդակցման լիարժեք միջոց։ Պատմությունը չգիտե որևէ մարդկային հասարակություն, թեկուզ նա ամենահետամնացը լինի, որը չունենար

<sup>1</sup> Էդ. Աղաջան, *Լեզվաբանության ներածությունը* ըստ լեզվի նոր ուսմունքի, էջ 235։

<sup>2</sup> Ի. Վ. Ստալին, *Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը*, էջ 60—61։

<sup>3</sup> Լեզվի ինստիտուտի «Աշխատ. ժողովածու», 1946, № 2, էջ 62։

իր հնչյունային լեզուն»<sup>1</sup>։ Ի. Վ. Ստալինի բացատրությունից միանգամայն պարզ է դառնում Ն. Մառի և նրա հետևորդների որոշակի սխալը՝ լեզվի ծառման հարցերում։

Ընկեր Ստալինը հանձարեղ պարզությամբ և գիտական խորությամբ ցույց տվեց լեզվի «նոր ուսմունքի» մյուս բոլոր դրույթների ոչ մարքսիստական, հակագիտական լինելը, ինչպես, օրինակ՝ հնչաբանական մեթոդի հակասպատմական, իդեալիստական ֆուլյունը, լեզվի և մտածողության մեխանիկական հասկացողությունը, ստադիալականության գոհհիկ մատերիալիստական բնույթը, լեզունների ազդեցության և պատմահամեմատական մեթոդի նիհիլիստական ժխտումը, համաշխարհային լեզվաստեղծման միասնական պրոցեսի հակապատմականությունը, լեզվի և բարբառի մասին սխալ պատկերացումը. առանձին լեզվական փաստերը պատմական տարբեր ժամանակների հետ բռնազբոսիկ կերպով հարմարեցնելը, «ձեռք լեզվի» առաջնային լինելու խժոժաբանությունը և այլն։

Մառը երբ «լուսաբանում» էր լեզվաբանական նոր պրոբլեմներ, իր տեսակետները «հիմնավորելու» համար դիմում էր հայոց լեզվի փաստերին, լինելով դա «համաշխարհային լեզվաստեղծման միասնական պրոցեսի», «ստադիալականության հերթափոխությունների», թե «Միջերկրածովյան ֆլեյիկական սուրստրատի» ու «էլեմենտների տեսության» հարցերը։ Առանձին մտքեր, դիսողություններ, երբեմն ամբողջ էջեր նվիրված են հայերենին Ն. Մառի գործունեության վերջին շրջանի աշխատություններում, ինչպես, օրինակ՝ „Лингвистическая поездка в восточное Средиземноморье“, „Что говорит язык по истории материальной культуры“ և այլն, որոնք պետք է խիստ քննադատության ենթարկվեն։

Ն. Յա. Մառի լեզվի «նոր ուսմունքի» հակագիտական դրույթները պարարտ հող էին գտել հայոց լեզվի ուսումնասիրության հարցերում։ Ն. Յա. Մառը և նրա հետևորդները հայոց լեզուն, համարել են ոչ միայն իսառնածին, հաբեթական ստադիայից պրոմեթեիդական ստադիային անցնող լեզու, հայերենի մեջ գտել են «դասակարգային լեզուներ» հանձինս «ֆեոդալական գրաբարի» և «վուզար ժողովրդականի», «դասակարգային» տարրեր են որոնել ոչ միայն հայոց լեզվի հնչյունաբանության մեջ, այլև հայերենի մի շարք մասնիկներ համարել են «դասակարգային», որոնք իբր թե կապված են «արտագրության» և նույնիսկ նրանով պայմանավորված «սոցիալական հարաբերությունների» հետ։

Ն. Մառի հետևորդները լեզվի «նոր ուսմունքի» դրույթները համարում էին հայագիտության մեջ նվաճում, դիտում էին իբրև մարքսիստական և հայերենի ամեն մի տարրի մեջ փորձում էին գտնել հաբեթական ստադիայից պրոմեթեիդական ստադիային անցնող երևույթ, իսկ Ն. Մառին համարում էին նոր, «մարքսիստական» հայագիտության հիմնադիր։

Հայոց լեզվի հետազոտողները Ն. Մառի նույնիսկ էլեմենտների իդեալիստական տեսությունը փորձում էին կիրառել հայոց լեզվի ուսումնասիրության հարցերում (Ա. Մովսեսյան և ուրիշներ)։

Ընդհանուր լեզվաբանության և հայագիտության բոլոր ժամանակների պատմության հարցերի ուսումնասիրման համար Մառի հետևորդները նրա

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 106։

«ուսմունքի» յուրաքանչյուր դրույթը ընդունում էին անքննադատ կերպով, իբրև անառարկելի ճշմարտություն, իբրև դոգմա: Այս տեսակետից բնորոշ են վերջին տասնամյակում լույս տեսած հայ լեզվաբանների մի քանի աշխատությունները (Ա. Ս. Ղարիբյան, Գ. Գ. Սևակ, Է. Աղայան և ուրիշներ):

Հասկանալի է, որ Ն. Մառի լեզվի «նոր ուսմունքի» դրույթներով առաջնորդվողները շկարողացան լուծել և չէին էլ կարող լուծել հայոց լեզվի ուսումնասիրության հարցերը:

Մառականությունը մեծ վնասներ հասցրեց թե՛ լեզվաբանական տեսական, պատմական խնդիրները քննելու, թե՛ գործնական հարցերը մշակելու, և թե՛ կադրեր պատրաստելու գործում:



Ի. Վ. Ստալինը ոչ միայն դրեց մարքսիստական լեզվաբանության կայուն և անսասան հիմքերը, այլև ստեղծելով լեզվաբանական կուռ ուսմունք, հանձարեղ պարզությամբ լուծեց լեզվի տեսության և պատմության հարցերում գոյություն ունեցող բոլոր բարդ ու կնճռոտ հարցերը:

Սովետական լեզվաբանները, զինվելով լեզվի ստալինյան ուսմունքով, լրիվ հնարավորություն ստացան զարգացնելու լեզվաբանական գիտությունը և համարձակ ու հաստատ կերպով ձեռնամուխ եղան լեզվաբանական տեսական և գործնական խնդիրների լուծմանը: Մեծ հեռանկարներ բացվեցին նաև հայագիտության հետագա զարգացման համար:

Լեզվաբանության վերաբերյալ Ի. Վ. Ստալինի աշխատությունների հրապարակումից հետո հիմնովին փոխվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի և բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզուների ու լեզվաբանության ամբիոնների գիտա-հետազոտական և մեթոդական-մանկավարժական աշխատանքների պլանները: Ստալինյան լեզվաբանական ուսմունքի սկզբունքները որոշեցին հայագիտական և լեզվաբանական հետազոտությունների հիմնական ուղղությունն ու խնդիրները: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայերենի քերականական կառուցվածքի, հիմնական լրացական ֆոնդի, բառային կազմի, ներքին օրինաչափությունների զարգացման, հայ ազգային լեզվի կազմավորման, ժողովրդական լեզվի և բարբառների փոխհարաբերության, լեզվի ու ոճաբանության և նման այլ հարցեր լրջորեն զբաղեցրին մեր լեզվաբաններին: